

**ԼԵԶՈՒԿՆԵՐԻՏԱԿԱՆ**

**ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ(\*)**

և մահը խորհրդանշող նշաններ, հաւանաբար հետազային իբր գերեզման կամ ուխտատեղի ծառայող: Տեղւոյն ուղղաբերձ ժայռերու կողմնները բոլորովին դժուարացուցած են ճամբան, բայց գէպի բազին հանող աստիճաններուն քարակտուրները կ'երեւան ցարգ: Քարայրներէն մէկուն մուտքէն քիչ մը հեռուն կը տեսնուի ներկայիս մզկիթի վերածուած փոքրիկ եկեղեցի մը: Բիւզանդական որմանկարներով ուր կը մըտնեն նեղ փողանցքէ կամ երկար խողոզէ մը և որ հոն բանակող թիւրքմէններուն կենդանեաց իբր փարսխ ծառայած է: Կոռիկոս, ինչպէս տեսանք, բիւզանդական տիրապետութեան ժամանակ Արեւելեան Միջերկրականի արիւնջ վրայ կարեւոր բերդաքաղաք ու առևտրական և զինուորական նաւահանգիստ էր: Հաւանաբար Ձ. դարէն սկսեալ, իբր մետրապոլտական կեդրոն ան ենթարկուած մնաց Տարսուսի թեմին և իբր այդ ունեցաւ պազիլիքա և բազմաթիւ այլ եկեղեցիներ ու վանքեր, քաղաքին ներսն ու շրջակաները, որոնցմէ ոմանց կտօքերն ու աւերակները կը մնան զեռ այժմ: Այսպէս քարադամբաններով եկերուած լայն ճամբուն վերջաւորութեանը վրայ տեսնուող եկեղեցին, գէթ իր աւերակներէն դատելով, կը թուի բաւական մեծ եղած ըլլալ, հաստահրմն կառուցուած քով ու գարդարուած մարմարեայ հաստ սիւներով և գեղեցիկ քանդակներով, իբր մնացորդները վայելուչ ճարտարագիտութեան մը: Վիզուոր Լանկլուա կը յիշէ որ ցամաքային բերդին մէջ տեսած է երեք մատուռներ: Ասոնց մեծագոյնին մէջ նշմարած է սրբոց նկարէն պատկերներ և պատերուն, սիւներուն, կամարներուն ինչպէս նաև ձեղունին վրայ զարդեր: Այսօր իսկ սոյն մատրան խորանն ու մկրտութեան առաջին որոշակի կ'երեւին: Միւս երկու մատուռները բոլորովին լեցուած են փլածոններով: Թէ՛ այս և թէ՛ ծովային բերդին եկեղեցիները ծառայած են հայկական պաշտամունքի:

Անկարելի էր որ այս բոլոր թարգմանական գրուածքները և այլն առանց ազդեցութեան մայրին հայերէնի վրայ. և մենք տեսնում ենք՝ որ եթէ Ը—Ժ դարերին հայ գրական գործերի մէջ գրեթէ չկան արաբերէն բառեր, ընդհակառակը աւելի ուշ, ԺԱ — ԺԲ դարերում գրուած աշխատութիւնների մէջ՝ նրանց թիւը հասնում է հարիւրներ, Յատկապէս բժշկութեան լեզուն, նրա հետ անբաժան հասկանալով նաև բուսաբանական, լեզուն, զուտ արաբերէն էր: Հայերէն բժշկական գրուածքների մէջ յաճախ ամենահասարակ բառերի տեղ, ինչպէս բո՛ւ, զարկեցալ և այլն, գտնում ենք նրանց արաբերէն հոմանիշը: Բժշկական գեղատոմսերը կազմուած են միշտ արաբերէն բառերով, մտաւորապէս այնպէս՝ ինչպէս այսօր գրուած են լատիներէն բառերով: Հայերէն թողել են մեզ նոյն իսկ բժշկական բառարաններ՝ արաբերէն, պարսկերէն, յուներէն, լատիներէն և հայերէն լեզուներով:

Մի գաղափար տալու համար այն ժամանակի հայ-արաբական բժշկական լեզուից, ստորև գնում ենք մի գեղատոմս, որ հանուած է Միսիթար բժշկի աշխատութիւնից:

« Հապ այարի՛ճ՝ որօգտէ գլխոյն և աչացն և ոսկիրացն և հանէ զաւելուածքն և գշի՛նութեննքն ի գլխոյն և ի յամենայն մարմնոյն: Առ հինգ աղք հալիլէ, սապո, ըռեւանդ կարմիր վարդ, զարիկոն, թրպուտ կէս կէս դրամ. շահմ խանալ, սակամնի, աֆթիմոն, հնդի աղ, քիթրէ, մուխլազբախ, անիսոն մի մի տանկ, պաշասանի փայտ և պտուղ, սասրոն, սալիխայ, մալուտքէ, զարիսէնի, սոււպուլ, զաֆրան, օշինդր, հայքար, ջնուզքար, լազուարդ քար, սուրինճան, պուզիտան, հապնիլ, կէս կէս

Թրգմ. ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
(Երբանակիւ՛ 1)

(\*) Շարունակութիւն՝ մեծանուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ի. Գլուխ):

դանկ, լուսէ զամէնդ մանտր և զսակամո- նին խոշոր, և շաղէ սաթառճի ջրով, հապ արա» (Մխիթար Բժիշկ էջ 144):

Տարակոյ չկայ որ արաբական փոխա- ունութեանց մի մասը՝ յունական փոխառու- թեանց նման զուս տառադարձութիւն է և բնաւ չէ մտած հայոց ոչ գրական և ոչ էլ ժողովրդական լեզուի մէջ: Արան իբրև ա- պացոյց է ծառայում այն հանգամանքը, որ նրանց մէջ կան այնպիսի ձևեր, որոնք յառաջացած են արաբերէն բառերի սխալ կետադրութեամբ կամ սխալ ընթերցանու- թեամբ: Այսպէս՝

Կլուճու (բոյս ինչ, Վստկ. 109). Եւ թէ առնուս կլուճուս և եփես զինեաւ, օզ- տէ. այս բառի դէմ յոյն բնագիրն ունի Ֆլուճու «խնդրաս» որ արաբերէն թարգ- մանութեան մէջ տառադարձուելով գրուել է جلودوس ֆլուճուս, հայ թարգմանք կար- դացել է սխալմամբ جلودوس կլուճուս և կամ գուճէ այդպէս է գտել իր գործածած ձեռագրում: Երկու դէպքումն էլ կլուճուս յառաջանում է ձեռագրի միջոցով և ժողո- վըրդի բերանը բնաւ չէ մտած:

Ճաւարս (մի տեսակ խաղող, Վստկ. 47). յոյն բնագիրն ունի խլորու որ արաբ թարգմանութեան մէջ տառադարձուել է جاورس խլորուս. հայ թարգմանք գտել կամ կարդացել է جاورس ջաւարս, որով կազմել է հայերէն ճաւարս ձևը: Այսպիսի բառ բնաւ գոյութիւն չէ ունեցած ոչ արաբե- րէնի և ոչ էլ բնականաբար հայերէնի մէջ:

Փուրփուղճայ (մի տեսակ խաղող). Ազգ մի սպիտակ խաղող կայ, որում հոռոմն ստինաս սսէ և այլ կայ որում փուփուղճա սսեն (Վստ. 47). այս բառի դէմ յոյն բնա- գիրն ըստ Ալիշանի, Հայքուսակ 309Ձ ունի կոնկիմթակաճ: Արաբերէն թարգմանութեան մէջ բառը տառադարձուելով եղել է قنطريون կոնդրիոն, կէտերը մասամբ ջնջուելով հայ թարգմանիչը գտել կամ կարդացել է قنطريون ֆուրֆուղճայ, որով և կազմել է հայերէն փուրփուղճայ անգոյ ձևը:

Բարբիւղակ (ծմել, blitum Գաղիան). արաբերէն بربړه յարբուզ կամ جربړه ջար- բուզ բառն է, որի նախատառը սխալ կար- դացուելով եղել է بربړه բարբուզ և դրա- նից էլ յառաջացել է վերի բարբիւղակ ձևը: Կարելի է յիշել դեռ մի քանի օրինակ- ներ էլ, բայց այսքանն էլ բաւական է ցոյց

տալու համար թէ արաբական փոխառու- թիւնների մի մասը՝ միայն ուսումնական նամբով է յառաջացած և ժողովրդական լեզուի մէջ բնաւ չէ մտած: Մնացեալների համար, ինչպէս վերևում ասացինք, չու- նենալով ժողովրդական գրուածքներ, չենք կարող ստել թէ ինչ չափով ժողովրդական բառեր են, ո՛ր ժամանակից են մտած հա- յերէնի մէջ, ո՛ր տեղով և ո՛ր լեզուից: Անուրանալի է որ նրանցից շատ քչերն են միայն է. կամ Ը. դարից, մի մասը մտած է Ասորիքի արաբների միջոցով Կիլիկիան հայերէնի մէջ, իսկ աւելի մեծ մասը Պարս- կաստանի ու պարսիկների միջոցով արեւել- եան հայերէնի մէջ: Արաբերէնը այդ ժա- մանակ, ինչպէս և հիմա ամբողջ մահմե- դական արեւելքի կուլտուրական լեզուն էր. բոլոր մեր շրջակայ ժողովուրդները (պար- սիկ, թուրք, քուրդ, թաթար, աֆղան եւ այլն) բազմաթիւ փոխառութիւններ էին կնքել արաբերէնից և այդ փոխառութիւն- ները այնպէս էին խառնուել բնիկ տարրերի հետ, որ անկարելի էր որոշել թէ ո՛րն է արաբականը և ո՛րն է օտարը: Կարող ենք ասել թէ արեւելքում կազմուած էր որոշ միջազգային բառարան. և ահա այդ բա- ռարանը անցաւ նաև հայերին, եթէ ոչ ամ- բողջութեամբ, զոնէ մեծ մասամբ: Այսօր էլ Նոր Նախիջևեանի կամ աւելի հեռու Սուչաւայի հայերը, որոնք արաբների է- րեսը բնաւ չեն տեսած, ունին իրենց բար- բառում զանազան արաբական բառեր, ո- ռոնք զբխում են նոյն միջազգային բառա- րանից: Օրինակ Ննիս. մախսում (անմեղ մանուկ) — արաբ. մախում, սախաթ (ժամ) — արաբ. սաաթ, Սչ. իլքսմբբու ու դոլ- վրբու (բախտաւորութեամբ և հարստու- թեամբ) — արաբ. կսմաք ու դովլաթ եւն. : Եւ որովհետև այն ժամանակի արեւելքում ամենից կուլտուրական և հայաց հետ ամե- նից աւելի շփման մէջ եղող երկիրը Պարս- կաստանն էր, որ և նոյն միջազգային բա- ռարանի գլխաւոր հեղինակն ու տարածիչն էր, ուստի մենք էլ յաջորդ ցանկի մէջ միա- սին հաւաքում ենք այն բոլոր փոխառու- թիւնները, որ կնքել է հայերէնը արաբե- րէնից ուղղակի կամ անուղղակի և յետին շրջանի պարսկերէնից: Դրանցից: Առաջ- գծեալները արաբերէն են, մլուսները պարս- կերէն: Այս կարգի պարսկերէն բառերը

պէտք չէ շփոթել այն հին իրանական փոխառութեանց հետ, որ յիշել ենք վերը գլուխ Թ. (ՏԵՍ Սինոն 1941, էջ 303, և շ.) և որոնք պարսկերէն լինելուց աւելի պահլաւերէն են, ըստ որում ներկայացնում են ոչ թէ արդի պարսկերէնի, այլ պահլաւական ձևերը. հմմտ. նիզակ — պլ. նիզակ — պրս. նիզա. զրանք փոխառեալ են հայերէնի մէջ հնագոյն ժամանակներից սկսած մինչև մասնեղական շրջանը, իսկ միւսները մասնեղական շրջանից յետոյ:

Ցանկը ունի 801 բառ, որոնցից 498 զուտ արարերէն են, իսկ 303 նոր պարսկերէն:

1. Բնութեան և նրա զորութեանց մասին.

Ջանապ, զոհալ, զոհրայ, բուրայա, դամար, մառեխ, մուքարի, տաւս, սարաւան, ասպարան, փիլաք, օտարի:

2. Կրօնական քաներ.

Կրօն, նախապարտութիւն, սփիւնք եւ այլն — \*այլք, գոռ, դանիշման, զեվիադար, զեխալ, զեհես, քափուս, կուռայ, \*կուրան, հեհ, \*հուրի, դադի, նեմիխ, մալուս, \*մանեսեի, մամբար, մեհրապ, \*մզիլիք, միշես, միլուս, մեհրայ, մոնայ, մուդի, մսիմանակ, ցալաք, Ռասուլ, Ռամ, Ռոհուն, սունաք, ցաղակ, օլիսմ, փուրկան:

3. Մարդ, մարդու և անասնի մարմնի մասեր.

Բազար (խելք), \*խալ, \*խպիպ, \*կոսոռ, \*հիս, սափրայ:

4. Հիւանդութիւններ և նմաններ, բժշկական քաներ.

Աթալակ, առական, բիմար, բուռն, բուրան, \*գիթ, գոսակ, զարդ, գահր, թուլմայ, լուք, խարազայ, խուլիք, \*կուզ, հասպակ, հավարիօն, հու, հուլպայ, մաղնուն, միամ, ցաղայ, ցասուր, ճիբիս, \*ճապայ, հուսխայ, \*տասեղ, օտարք, շուշտանդամ, պալղամ, պահրէզ կամ փահրիզ, օխես, օխ, րամաք, քաշալ:

5. Կենդանիներ.

Ապուզնայ, \*բլբուլ, դաւաք, դուռեն, զաժրուռ, դուրափայ, քիմահ, \*թութակ, իկտիշ, իշտրմուզ, խալիզոն, խնուզ, կուռաք, մալ, մարաք, մեմուն, \*շիշակ, պախարայ, ջնիքայ, ռահվար, սնդուր, փանիլ:

6. Հնչանիքի և ընկերութիւն.

\*Ազապ, մալազ, փրդապ:

7. Մոկրագործական.

ա) Բոյսեր — այլուլուան, ազատորախա, ազարին, արխար, ալածամբի, ալաճի, ալպուն, ալուս, ախալիա, ախինոս, ախին, ախլիմա, այլսալ, ախնուան, ախուան, ապիր, ալրկարհա, աճաս, ալաճ, աւղան, աւրուսիա՝ անդարա, անճարա, անճարակ, անճիսան, անճիթիսամ, անճուպար, ապրամն, ապրուր, առասն, ապիս, ասմանջուն, ասպաղղլ, ասպանտ, ասպաստ, ասպարմ, ապալուր, ասպուրակ, աստախոսոս, ասմաս, արտնդուպարանդ, արաւ, արիւ, արճուան, արմինան, արտանիսա, աւթիճոն, ափարբինոն, \*ափինոն, ախլիվելիք, բազրան, \*բալ, \*բալասան, բալուռ, \*բակլայ, բահման, բաղամ, բան, բանդ, բաշխ, բատաարդ, բարբիղակ, բեհաշտի, բգուկ, բզրկասուն, բիխարար, բէշ, բիլան, բրնջուս, բզում, \*բազար, գգմաք, գուլիսապահ, գուլվարդ, գազէ, գաւուանջ, գաւրիվար, գաւրիան, դիճալ, \*ճըրեւանի, երպասուր, զահթեր, զահրայ, զանճալիլ, զանճար, զարհն, զարիբ, զարու, զարուր, զարրինգրամիս, զափրան, զինջարակ, զուռուայ, զեւանդ, գրիշք, գրմարտ, ըրազիան, Թաթրա, Թաղանդաստ, Թառնիին, \*Թարխուն, քմբուլ, քմհնթի, Թութիա, Թուտարի, \*թուրիմջ, Թուրշա, քմուդ, քայուս, Ժիթք, Ժիրակ, իխուն, լալա, լախախայ, լապալաք, լապան, լեղիք, \*լոբիա, լուպ, լուպնի, լուճ, լուճահն, խալանջ, խալիլ, խամալուն, \*խաշխաշ, խար, խառնութ, խառնուպ, խարաք, խարբախ, խարդահրա, խարիխար, խարալ, խափիթ, խեղուկ, խիար, խիարշամբար, խիր, խիլալ, խլեփ, \*խոզակ, խորփրատ, խուզանի, խուպազ, խուռամ, խոշնջան, կալի, կակուլա, կանչանայ, կաճամար, կապ, կիլիլի, կլուճուս, \*կղմուխ, կնքիլ, \*կոկան, կուս, կոսոք, կրիմ, կրօմանէ, կրիէ, կոզայ, հազազ, հազարդարուն, հազարճաշան, հալիլա, հալթիպ, հալթա, հան, համահիմ, համամա, համալարահար, համկալ, հանդալ, հանդաղուր, հաես, հաեթ, \*հապալան, հապլիտր, հապլիթ, հապլմուկ, հապմուկ, հապմիլ, հապլպան, հասակ, հավր, հասաղ, հարան, հարբ, հարմալ, հաւաք, \*հիլ, հիլինոն, \*հինայ, հնդիպէ, հնդկոյ, հոսոսմաի, հուլաք, հուլպա, հոււնայզ, հուսան, դալինոն, դամպիլ, դալուս, դասափ, դար, դարասէ, դարաս, դարիլոն, դափեթ, դուլղաս, դուլպ, դրճա,

նալուզայ, նանակ, նասե, նասվար, նար-  
 նիր, նաւարս, ննդիան, նուիհար, նուլ-  
 պան, նուվնում, նոզպե, նոթիր, մահգա-  
 նակ, մանրայ, մաղայ, մանրիթ, մամրա,  
 մայա, մարան, մարար, մարգանդու, մարիս,  
 մարմարիուլ, մեխուկ, մեհրիկ, մեքին,  
 մքրուր, մեմիւ, մու, մուլուխ, մուխալա-  
 ս, մոզ, \*յամպար, յասպե, յարար, \*յու-  
 նայ, նագիւթ, նամամ, նանախու, նայիս,  
 \*նարինջ, նարնիս, նարմուշկ, նարտան,  
 նիլ, նիշուշ, ննի, \*նուրիկ, \*նուշուֆար,  
 ննի, սակակուլ, սահայ, շահիթուակ,  
 սահմիանդայ, շահպալուտ, շահպանակ,  
 \*շահպրակ, \*սամամ, շանկիար, սապահ,  
 սաւարան, սեմ, շէրիիշտ, սերմ, շարա-  
 լութ, սեհարմի, շոմի, սուխանի, շուքու-  
 Ֆայ, սպրամ, \*շրէշ, շաշմակ, շուս, շու-  
 Ֆաշ, շքնուոր, պագրպանն, պալաուր,  
 պահմի, պաթարմա, պապլաս, պապունան,  
 պառուուան, պառպաս, պասպային, պա-  
 սեխ, \*պասիննան, պատրինջ, պատուն, պար-  
 գաս, պարհուկ, պարսիւն, պիլիսիի, պուլ,  
 պուլար, պուտուն, պրինկ, պրուկ, \*սահան,  
 ռասպայ, ռահանդիսննի, ռիպազ, ռուզ,  
 սագիր, սալաթ, սալիխա, սազպ, սան,  
 սամուխ, սամամբի, սանալ, սապր, սա-  
 սալիս, սասախինիս, սասպ, սանեն, սա-  
 րախ, սարդուղ, սարմախ, \*սիսամբար,  
 սիսպար, \*սմբուլ, սնոպար, սնոպրի,  
 սերնջան, սուս, սուրգասանայ, \*սպանխ,  
 սպարակ, սպտան, վանիլիակ, վան, վաս-  
 մա, վարս, ջալին, ջալիս, տահմուշտ, տան,  
 տանգ, տապար, տաստանպուշայ, տարասիս,  
 տարղոն, տիվտար, տուխն, տուլաս, տուղու,  
 փարասիոն, փափղեմն, փեննա, փու, փուր-  
 փուզնայ, փուլփի, \*փրփրիմ, փամունի,  
 փաշմ, փապպապ, փարաւե, փախանաջ, փար-  
 փուր, փոթ, \*փուլեմայ, փուս, փուլար,  
 փուր, սեւամա, \*օշան, Ֆասարայ:

բ) Ուլի — \*չեշ, \*սարբինայ, բաշչայ,  
 բոստան, պահէզ:

8. Ուշնարածութիւն եւ գիւղատնտեսութիւն.  
 Ձիւս սար — թանգ, լիւակ, նալ, սախ-  
 տեշ, սրար, փալան, քնիուշ:

9. Գիտութիւն եւ արուեստ.

ա) Արեւոյսի փրփրեթու — ալիմիա, գաս-  
 տաքար, \*գրինգ, գոխն, \*լլուս, խապազ,  
 խարուանդայ, կալափեշ, \*կաւաս, հազամ,  
 հասաս, \*ուլենեիկ, մամար, \*պայար, \*չուլ-  
 նակ, սերեֆիկ, փալանտուշ, \*փիլիա:

բ) Ուսում եւ գրականութիւն — բախրբղ,  
 կափայ, դալամ, Սաքար:

գ) Նկարչութիւն — չկայ:

դ) Երգչութիւն — բարբուս, \*գոս,  
 դամ, դաւա, դանոն, մքրուզ, նաղարայ,  
 նաֆիր, սազ, սափարայ:

ե) Խաչք եւ մշտնա — \*անպարար, մա-  
 զաս, մաղալ, մասխարայ, \*նարտ, սաս-  
 րինջ, քուշտագիլ:

10. Գոյներ.

\*Գումայր:

11. Վանաստակաւորութիւն եւ դրամական գոր-  
 ծարք.

\*պարայ, \*կապալ, դաւիլ, մազաս, մալ,  
 զամ, զումայ, ռեմոն:

12. Երկնութիւն եւ շինի մասեր.

արունի, բաբ, բուրջ, գիկ, քալուքայ,  
 կանդուրայ, կուպայ, Նղմուշք, մղակ, չա-  
 փար, պրէհ, սայման, սարուփարթայ, փն-  
 սուկ:

13. Հագուստ եւ զարդ.

ապուկային, բալափուշ, դաստառչայ,  
 դուռայ, գունար, քան, թեւ, \*լաթ, \*լա-  
 ջակ, լեմեֆ, \*խալխալ, կազ, \*կապայ,  
 կոռիկ, կուպպայ, մալին, շարփուշ, շմաթ,  
 շուպ, \*չմուշ, \*չուխայ, պեշայ, \*ռիսդէ,  
 սարազուկ, սուֆ, փարտայ, \*քթան:

14. Ունեյիլի եւ ընկերիք.

գուլարաշարար, \*գոման, թարխանա,  
 լեզանք, լոշ, \*խաւիթ, կուլապ, հավարի,  
 մունճախղէն, մուստառ, \*ճայ, Նշաստակ,  
 \*չիբիկ, \*ռուպ, տապրիզասակ, թիբս, փե-  
 նիտ, քուֆտայ:

15. Առեցիկն անտարբիւն, կարասիք.

\*ակիշ, բուրակ, դաստապրիկ, դաստի-  
 շոն, դուրն, \*թաղար, \*քաս, թաշտ, թա-  
 փուր, թուայ, \*խսի, կամ նասի, կա-  
 ռան, \*կողպիք, հեմլան, նարայ, մկար,  
 \*մկրաս, չամշաշերեպ, պատրա, շոլլի,  
 սալա, սասուր, սադր, սիւնի, \*սնդուկ,  
 քափշայ, քոր:

16. Թիւ, չափ, կշիռ եւ դրամ.

ասիլ, դաստա, դահարամ, թասու,  
 թուխթ, խանար, հաշտագրամ, հաւթա-  
 գրամ, մթալ, ռուպ, ռոթլ, տասակ, \*տրջակ,  
 քիլակ:

17. Մեքարներ, համային նիւթեր, խեմ եւ  
 նմաններ.

աշմ, սարուն, \*աւակ, բարկօտա,  
 \*բուսա, \*գան, դիւնաղիւնար, եւաւ,

թանագ, թուֆի, \*լազուարթ, \*լալ, լուք, \*խալիայ, խիմուլակա, \*կլայեկ, կերան կամ դաքրան, հիթիս, մահակ, մահուտայ, մարդասանկ, մարդարիշար, մուկլ, մուլդե, նադրուն, \*ոփայ, պատժաթ, ջեղաֆաթ, ջուհար, ռասիմեն, ուշնայ, \*սասափ, սիդիգուն, սիրիսիշտ, Տիպլի, քարուպայ, ֆիպրիթ:

18. Ճանրի վերաբերեալ. չկայ:

19. Ժանհանսկ եւ ճեղ:

\*չուտ, (փետրուար):

20. Երկիր եւ պետքիքն.

ա) Երէջ Ժուր — դարբանդ, քիլ, կլայ, մայսան, միհա, սեհլ:

բ) Պետալան Կաշ և Ղաշաճու-Նիան — աւմիրալուսմնիք, ամիր, \*գզիր, ըքքեպար, թարխան, խալիփայ, հեշուք, ճաշկիր, \*մեղիք, միհնայան, մուխրասիպ, շահնայ, ջիհանգիր, ռայիս, սուսար, \*սուլսան, փաթշահ, փայիկ, Ֆառաւ:

գ) Վարշահ Բորձար և Դիսանլան Բրու-Նիսիք — մահր, մանուր:

դ) Հարիք — ապուր, խարան, հազր, մալ, պաջ:

ե) Պարբուշ — ալամ (գրօշ) ր ալափ, բահդուր, եսիր, զախմել, \*թալան, խանդակ, խուլայ, խսար, համլայ, հարամի, զազա, ճուհիկ, մենեհ, չարխուր, շանդար, ռայ, սրահանգ, քմին:

զ) Ջեհեր — բալաթիկին, դիլիկ, խաւաշփիր, ճաւաշիուս, ճուսան, շիմշիր, սլեհ, փիլիկոն, քէշ:

21. Սովորական կենսիք բառեր.

ալանի (յայտնի), արայիշ, բէշարայ, բէշմար, բէուճէտ, բէսիֆաթ, բեդար, բեվաֆայ, բուխտան, գանգալ (կատակ), գաստրութիւն, \*գիրտ, գրուտ, զլլիկ, ճնտամ, ըզզակ, թաղել, թամայ, բամամ, թամաշայ, քեզգիր, լաղպա, խալպայ, խալաս, խալաս, խալուաթ, խապար, \*խիկար, խիսմ, խշկել, \*խումար, \*կողոս, կուշդ, Եսու, շիւան, շախել, ջուապ, ռափիկ, ռեամ, ռինտ, \*սաղիլ, \*տաղել, \*ճնագ, տուրկան, փարս, \*քիչ, քունջ, քուշտ:

22. Մակրայ եւ նմաններ.

\*ափոս, բարէ (գոնէ), զիրայ, զէր ու զազար, զինահար, թէզ:

Թէև ցանկը բաւական ստուար է, բայց այնու ամենայնիւ ամբողջական չէ. որովհետև մեծ մասամբ հրատարակուած չեն

դեռ այն գրութիւնները (միջնագրեան տաղեր, բժշկարաններ, ախտարական գրուածքներ, պաշտօնական կամ դիւանական գրութիւններ ևն.), որոնցով հարուստ է այն ժամանակուայ հայ գրականութիւնը: Զուգինք մի այնպիսի բառարան ուր այդ բոլոր բառերը հաւաքած ու ամփոփած լինի. եղածներն էլ կրու՞մ են պատահական բնոյթ, որովհետև այդ բոլոր բառերը համարու՞մ են մեզանու՞մ խորթ ու անհարգատ տարբեր, գրական լեզուից իսպառ մերժելի եւ արժանի միայն ուսմական լեզուի մէջ գործածուելու: Սրանով մենք յայտնած ենք լինու՞մ արդէն թէ արարական փոխառութիւնները ի՞նչ ընդունելութիւն գտան հայերէնի մէջ՝ եթէ ոչ անցեալու՞մ, գոնէ այժմ է ապագային: Նրանք իրենց գոյութիւնից մեծագոյն մասամբ գրիւկու՞ով՝ մուսուլման մասնուցեցին. մի մասը եթէ շարունակու՞մ է իր գոյութիւնը ուսմիկ կամ ժողովրդական լեզուի մէջ՝ հայութեան գրեթէ բոլոր գաղութներու՞մ, այդ բանը միմիայն պարսկերէնի, թուրքերէնի, թաթարերէնի և տաճկերէնի միջոցով է, որոնք ունենալով բազմաթիւ արարական փոխառութիւններ, պատճառ են դառնու՞մ նոյն բառերը հաստատուն պահելու դեռ հայ բարբառների մէջ: Գալով գրական հայերէնին, նա չափազանց անողորմ է այդ կարգի փոխառութեանց վերաբերմամբ, որոնցից 108 հաստատու միայն ընդունել է իր մէջ, կէսը զուտ բարբերէն, կէսը նոր պարսկերէն: Այս բաները նշանակուած են մեր ցանկու՞մ աստղանիշով և շատերը մեր արգի լեզուի անհրաժեշտ տարրերն են կազմու՞մ. ինչպէս՝ բալ, բակլայ, քուբակ, ֆիչ, մկլիթ, կաւաթ, խալ, պասիմնան ևայլն:

Բայց հասարակ անուններից, հայերէնը արաբերէնից ու նոր պարսկերէնից փոխ է առել նաև անձնական յատուկ անուններ. ինչպէս Սաճար, Զիհանգիր, Խուրեուզ, Զուսուուզ, Աբաս, Ապլարիպ, Աբուղամբ, Հասան, Համամ, Դովլաթ ևայլն: Ազգային ու կրօնական տեսակէտով այս կէտը զարմանալի պիտի լինէր, եթէ սակայն չնկատէինք որ փոխառեալ անձնական անունները ըստ իմաստի անմեղ ու սովորական բառեր են, ածականներ, պատկերաւոր բացատրութիւններ, այն ժամանակները յայտնի եղած նշանաւոր մարդկանց անուններ:

և երբեք չկայ նրանց մէջ մէկը՝ որ յիշեցնէ մահմեդական կրօնը, ինչպէս Մուհամմեդ, Ալի և այլն:

Մենք մինչև այժմ չխօսեցինք Հայաստանից գուրս գտնուած հայութեան մասին, թէ ինչ ազդեցութիւն են կրել նրանք արաբերէնից: Այստեղ կայ երեք խաւ. հնագոյն խաւը Եգիպտոսի, Ասորիքի և Միջագետքի այն հին գաղութներն են՝ որ արաբական ահագին մեծամասնութեան մէջ կուլ գնալով՝ ձուլուել անհետացել են: Երկրորդ խաւը կազմում են այն գաղութները, որոնք թէևս դեռ կրօն եւ ազգութիւն պահել են, բայց լեզուն կորցնելով ամբողջովին արաբախօս են դարձել. այսպէս են Հալէպի, Դամասկոսի, Պէյրութի, Մերզիների, Մուսուլի, Քերքուքի գաղութները, որոնց վրայ պէտք է աւելացնել նաև Սիւրբը, որ թէև Հայաստանի մէջ է, բայց իրեն ծայրագաւառ, շրջակայ քուրդ ու արաբ մեծամասնութեանց ազդեցութեամբ կորցը:

Նելով հայերէն լեզուն, քրգախօս ու արաբախօս է դարձել: Երրորդ խաւը կազմում են Ասորիքի հիւսիսային արեւմտեան անհիւնը գտնուած հայ գաղութները (Չոք-Մարզուան, Անտիոքի գիւղերը, Սուեօի և ցատկապէս Զիւրի-Շուղուրի՝ հայերը, ինչպէս նաև Բաղդադի և Բարսայի հայերը) որոնք խօսում են հայերէն բարբառներ, բայց մեծապէս ազդուած արաբերէնից. համառ. Աճառեան, Հայ Բարբառագիտութիւն, էջ 213-214, գրուած հատուածները: Այս երեքից գուրս իբրև չորրորդ խաւ պէտք է յիշել Ասորիքի նոյն շրջանը ապաստանած 120,000 կիլիկեցի հայ ժողովուրդը, որ թէև հայախօս և ապրում է Փրանսիական հպատակութեան տակ, բայց շրջապատի արաբախօս մեծամասնութեան ազդեցութեան տակ ուշ թէ շուտ պիտի կրի արաբերէն լեզուի կնիքը և մտնի նախորդ երրորդ խաւի շարքը:

Պրոֆ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի

16 ՅՈՒՆԻՍԻ 1945 Թ Ի Ա. ԷՋՄԻԱԾԻՆ

## Ն Ի Ս Տ Բ

1945 թ. Յունիսի 18-ին, ժամը 11 և 30 բողոքին, Հոգեւոր Ճեմարանի մեծ գահլիւնում, կայացաւ Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստը նախագահութեամբ Նորին Սրբութիւն Կիլիկիայի Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա.-ի, ատենապետութեամբ ակադեմիկոս Աւետիք Իսահակեանի: Ժողովին մասնակցում էին 105 պատգամաւոր: Նորին Վեհափառութեան պատշաճ աղօթքից յետոյ ատենապետը՝ ժողովը բացուած յայտարարելով՝ կարգաց ՍՍՌՄ Ժողովումովեաի նախագահ Ի. Վ. ՍՍԱԼԻՆԻՆ ուղղուած հեռագրի տեկատը:

ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ

### ՄԱՐՇԱԼ ԱՍԱԼԻՆԻՆ

«Այսօր մենք, Սովետական Միութեան և արտասահմանեան երկրների հաւատացեալ հայութեան ներկայացուցիչներս, հաւաքուելով Սուրբ Էջմիածնի դարաւոր կամարների տակ, անցնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան և եկեղեցական մի շարք հարցերի լուծման մեր աշխատանքին: «Մենք լաւ ենք հասկանում, որ առանց Ձեր բարեհաճ վերաբերմունքի, Հայ Եկեղեցու համար պատմական առաջնակարգ նշանակութիւն ունեցող այս իրադարձու